



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԵԻ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ

Հայաստանի Օգնութեան
Կոմիտէի Ամերիկայի Շր-
ջանի Կազմը Վաւերաց-
ուած է Հայաստանի **ՀՕԿԻ**
Նախագահութեան կողմէ
19 Մայիս, 1925

ԻԻ ԵՈՐԲ

1925

361

2-24

1 MAR 2010

361
Z-24

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԵԻ
(ՀՕԿԻ) ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ

AMERICAN COMMITTEE TO AID ARMENIA

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ

1. Հայաստանի Օգնութեան Կոմիտէն կազմուած է Երեւանի մէջ եւ վաւերացուած Հայաստանի Կեդրոնական Գործադիր Կոմիտէի նախագահութեան կողմէ 1924, 11 Յունուարի, ունենալով նպատակ՝ աջակցելու Հայաստանի տնտեսական եւ մշակութային շինարարութեան:

2. Համաձայն Հայաստանի Հօկի կանոնադրին, Ամերիկահայ Հօկն եւս քաղաքական կամ կուսակցական ոեւէ նպատակ կամ գործունէութիւն չունի:

3. Ամերիկահայ Հօկը Հայաստանի ազգաբնակչութեան իր աջակցութիւնը կ'ընծայէ Հայաստանի Հօկի միջոցաւ:

4. Ամերիկահայ Հօկի հասոյթներն են՝

ա. Անդամավճարներ,

Բ. Նուիրատուութիւններ,

գ. Հանգանակութիւններ,

դ. Կամուր օժանդակութիւններ՝ զանազան միութիւններու կողմէ,

05 JUN 2013

42.884

ներկայացումներէ, դասախօսութիւններէ, խնճողներէ, վիճակահանութիւններէ եւ զանազան ձեռնարկներէ գոյացած գումարներ:

ԿԱԶՄԸ

5. Ամերիկահայ Հօկը կազմուած է՝
ա. Համագումարէ, որ տարին մէկ անգամ
կը գումարուի:

բ. Կեդրոնական Վարչութիւնէ, որ կը
գտնուի Նիւ Եորքի մէջ:

գ. Մասնաճիւղերէ:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

6. Ամեն Հայ, որ կ'ուզէ Հօկի միջոցաւ օ-
ժանդակութիւն ցուցնել Հայաստանի, կրնայ
անդամագրուիլ այս կազմակերպութեան:

7. Իւրաքանչիւր անգամ պարտի վճարել
մէկ տոլար կամ աւելի մուտք եւ առնուազն 25
սենթ ամսավճար:

8. Իւրաքանչիւր անգամ կ'ունենայ ընկե-
րութեան անդամատետրը, որու մէջ կ'արձա-
նագրուին անոր վճարումները:

ՄԱՍՆԱԾԻՒԴ

9. Մասնաճիւղ մը կազմելու համար կը
պահանջուի առնուազն հինգ անգամ:

10. Մասնաճիւղ մը կ'ունենայ վարչու-
թիւն, բաղկացած առնուազն 3 անդամներէ, որ
կ'ընտրուին մեծամասնութեան քուէով:

11. Մասնաճիւղի վարչութեան պարտակա-

նութիւնն է՝ ջանալ անդամներու թիւն աւելցը-
նել, կանոնաւորապէս հաւաքել մուտքերը եւ
անդամատուրքերը. սերտ կապ պահպանել Կեդ-
րոնական Վարչութեան հետ. կանոնաւորապէս
անդամական Ժողովներ գումարել, առնուազն
ամիսը անգամ մը. ստեղծել գործունէութիւն՝
ընկերութեան նպատակներուն համաձայն:

12. Մասնաճիւղի վարչութիւնը պարտի ե-
րեք ամիսը անգամ մը կեդրոնին ղրկել ան-
դամատուրքերէն գոյացած գումարները, ըն-
թացիկ ծախքերու համար պահելով միայն ան-
դամավճարներու 20 տոկոսը: Միւս կարգի հա-
սոյթներէն գոյացած գումարները պիտի ճամ-
բուին Նիւ Եորք, Կեդրոնին անմիջապէս:

13. Մասնաւոր նպատակաւ եղած նուէրնե-
րը մասնաճիւղերուն յայտնած բաղձանքին հա-
մեմատ նոյնութեամբ կ'ուղարկուին Հայաստա-
նի Հօկի կեդրոնին, մասնաւոր նպատակի յիշա-
տակումով միասին:

14. Մասնաճիւղի վարչութիւնը պարտի
վեց ամիսը անգամ մը ընդհանուր համարա-
տուութիւն ընել Կեդրոնական Վարչութեան՝ իր
գործունէութեան վերաբերմամբ: Երկրորդը
պէտք է ուղարկուի՝ Համագումարէն ամիս մը
առաջ տարեկան հաշուեցոյցով միասին:

15. Մասնաճիւղ մը իր անդամներու շրջա-
նակէն դուրս հանգանակութեան մը չի կրնար

ձեռնարկել, առանց նախօրօք Կեդրոնական Վարչութեան հաւանութիւնն առնելու:

16. Մասնաձիւղերը կը դործածեն Կեդրոնական Վարչութենէ՝ մատակարարուած նամակադրութիւններ եւ ընկալադրերու յատուկ տետրեր:

17. Մասնաձիւղերու քով գտնուած գոյքերու իրաւունքը կը պատկանի ընկերութեանս Կեդրոնական Վարչութեան: Մասնաձիւղ մը լուծուելու պարագային բոլոր պաշտօնական թղթերը, դրամները եւ գոյքերը կը յանձնուին Կեդրոնական Վարչութեան:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

18. Ամերիկահայ Հօկի Կեդրոնական Վարչութիւնը, բաղկացած առնուազն 9 եւ առ առաւելն 15 հոգիէ, կ'ընտրուի տարեկան Համագումարի մէջ, կը պաշտօնավարէ մէկ տարի եւ վերընտրելի է:

19. Կեդրոնական Վարչութիւնը իր մէջէն կ'ընտրէ իր դիւանը, դանձապահը եւ համարակալը, ինչպէս եւ մնայուն կամ առժամեայ յանձնախմբեր:

20. Կեդրոնական Վարչութիւնը ընկերութեանս վարիչ մարմինն է, որու պարտականութիւններն են՝

ա. Կանոնաւորապէս յարաբերութիւն պահել Հայաստանի Հօկի հետ եւ երկրէն ստաց-

ուած կարեւոր տեղեկութիւնները հաղորդել մասնաձիւղերուն:

բ. Հայաստանի կարիքները ներկայացնելով հրապարակային ժողովներով, հրատարակութիւններով եւ այլ միջոցներով, Հօկի գաղափարները ժողովրդականացնել Ամերիկահայ դաշութին մէջ:

գ. Սերտ յարաբերութիւն պահել մասնաձիւղերու հետ, ուղղութիւն տալ անոնց դործունէութեան, հարթել մասնաձիւղերու մէջ ծագած վէճերը: Վեց ամիսը անգամ մը լրիւ տեղեկագիր ներկայացնել Ամերիկահայ Հօկի դործունէութեան մասին թէ՛ մասնաձիւղերուն եւ թէ՛ Հայաստանի Հօկի կեդրոնին:

դ. Հայաստանի Հօկի կողմէն եղած մասնաւոր յանձնառութիւնները կատարել:

ե. Հանդանակութիւններու եւ այլ կարեւոր ձեռնարկներու համար կազմել յանձնախմբեր եւ քննադատապահել զանազան ընկերութեանց աջակցութիւնը:

21. Կեդրոնական Վարչութիւնը իր միամեայ դործունէութեան համարատուութիւնը կ'ընէ Ամերիկահայ Հօկի Համագումարին՝ դրաւոր կերպով:

22. Կեդրոնական Վարչութիւնը Ամերիկահայ Հօկի վերաբերող դրամական բոլոր դործառնութիւնները կը կատարէ վստահելի

դրամատան մը միջոցաւ։ Ստացուած դրամները անմիջապէս կը յանձնուին դրամատան եւ կրնան հանուիլ միայն չէքերով, որ պէտք է կըրեն զանձապահի հետ միասին նաեւ ատենապետի կամ ատենադպրի ստորագրութիւնները։

23. Կեդրոնական Վարչութիւնը կրնայ որդեգրել մասնաւոր, լրացուցիչ կանոնադիր, որ չհակասեր Հօկի կանոնադրին։ Համագումարը կրնայ դադարեցնել որեւէ կանոն, որ չի կազմեր այս կանոնադրի մէկ մասը։

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

24. Ամերիկահայ Հօկի տարեկան Համագումարը, որ կը կազմուի մասնաճիւղերու ներկայացուցիչներէն, ընկերութեան գերագոյն, օրէնսդիր ու համարառու մարմինն է։

25. Համագումարը տեղի կ'ունենայ տարին մէկ անգամ, Նիւ Եորքի մէջ։ Առաջին Համագումարը կը հրաւիրուի 1926, Մայիս ամսուայ մէջ, ուր կ'որոշուի նաեւ յաջորդ Համագումարի օրը։

26. Արտակարգ Համագումար կը հրաւիրուի՝ երբ Կեդր. Վարչութեան անդամներու երեք չորրորդը հարկ կը տեսնէ եւ կամ մասնաճիւղերու երեք չորրորդը կը պահանջէ։

27. Մինչեւ 20 անգամ ունեցող մասնաճիւղը մէկ ներկայացուցիչ կ'ուղարկէ Համագումարին։ 20-էն աւելի եւ մինչեւ 40 անգամ ու-

նեցողը՝ 2. նոյն համեմատութեամբ, աւելի անգամ ունեցողները կ'ուղարկեն աւելի ներկայացուցիչներ։

28. Հօկի նպատակներուն սատարող տեղացիական եւ այլ ընկերութիւններ, Կեդրոնական Վարչութեան որոշումով կը մասնակցին Համագումարին՝ խորհրդակցական ձայնի իրաւունքով։

29. Համագումարի պատգամաւոր կրնան ընտրուիլ միայն անոնք որ վեց ամիս անգամ եղած են տեղւոյն մասնաճիւղին եւ իրենց վճարումները ըրած են մինչեւ Համագումար։ Մասնաճիւղի վարչութիւնը պարտի ներկայացնել Կեդրոնական Վարչութեան կամ Համագումարի դիւանին վաւերագիր մը՝ այդ պարագան ճշտող։ Նորակազմ Մ.ճիւղեր բացառութիւն են։

30. Համագումարը օրինական կը համարուի, երբ մասնաճիւղերու մեծամասնութեան պատգամաւորները ներկայ են։

31. Համագումարի պաշտօնն է՝

ա. Ընդունիլ եւ քննել Կեդրոնական Վարչութեան տեղեկագրերն եւ հաշուեցոյցը։

բ. Կարգադրել այն խնդիրները, որոնք լուծուած չեն ստացեր Կեդրոնական Վարչութեան կողմէ։

գ. Ընել կանոնադրային բարեփոխութիւններ՝ նախատեսուած պայմաններով։

դ. Ընտրել յաջորդ տարուան համար Կեդ-
րոնական Վարչութիւնն:

Ե. Քուէարկել յատուկ որոշումներ՝ յաջորդ
տարուայ գործունէութեան համար:

32. Համագումարի որոշումները կը տըր-
ուին բոլոր ներկայացուցիչներու քուէներու
մեծամասնութեամբ, ի բաց առեալ կանոնադը-
րային փոփոխութիւնները: Կեդրոնական Վար-
չութիւնն եւս կ'ընտրուի նոյն մեծամասնու-
թեամբ:

ԿԱՆՈՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄ ԵՒ ԼՈՒԾՈՒՄ

33. Այս կանոնադրի որեւէ մէկ յօդուածը
ընջելու, բարեփոխելու, կամ նոր յօդուածներ
մտցնելու առաջարկը պարտի լինել գրաւոր եւ
Համագումարէն առնուազն 2 ամիս առաջ, եւ
պարտի ներկայացուիլ Կեդր. Վարչութեան:
Ներկայ քուէներու երկու երրորդի հաւանու-
թիւնը անհրաժեշտ է՝ ընդունելու կանոնադրա-
յին փոփոխութեան որեւէ առաջարկ:

34. Ամերիկահայ Հօկի լուծման պարագա-
յին, ընկերութեանս բոլոր գոյքերը, թղթերը,
գրամները կը պատկանին Հայաստանի Հօկի
Գլխաւոր Վարչութեան:

Վաւերացուած Ամերիկահայ Հօկի

Կեդրոնական Վարչութեան կողմէ

28 Ապրիլ 1925, Նիւ Եորք:

<< Ազգային գրադարան



NL0215821

42.884